ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «23» հունվարի, 2023 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 02-Ա/Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԵՎ ԹԵՄԱՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ ՈՒՆԵՑՈՂ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ՎՃԱՐՎՈՂ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի N 01-Ա/Ք ՀՐԱՄԱՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունվարի 10-ի N 2-Ն որոշմամբ, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մայիսի 7-ի N 20-Լ հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի կանոնադրության 18-րդ կետի 7-րդ ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական ծրագրերում և թեմաներում ընդգրկված գիտական աստիճան ունեցող գիտաշխատողներին վճարվող հավելավճարները կազմակերպություններին տրամադրելու կարգը՝ համաձայն Հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահի 2022 թվականի հունվարի 26-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական ծրագրերում և թեմաներում ընդգրկված գիտական աստիճան ունեցող գիտաշխատողներին վճարվող հավելավճարները կազմակերպություններին տրամադրելու կարգը հաստատելու և Հայաստանի

Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահի 2015 թվականի հունվարի 19-ի N 01-Ա/Ք հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 01-Ա/Ք հրամանը:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լևոն Ֆարմանյանին:

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ

Հավելված
ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի նախագահի
2023 թվականի հունվարի 23-ի N 02-Ա/Ք հրամանի

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԵՎ ԹԵՄԱՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ ՈՒՆԵՑՈՂ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ՎՃԱՐՎՈՂ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին գիտական և գիտատեխնիկական գործունեության շրջանակներում իրականացվող ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման, ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման, նպատակային ծրագրերում (այսուհետ՝ Ծրագիր) և պայմանագրային (թեմատիկ) թեմաներում (այսուհետ՝ Թեմաներ) ընդգրկված գիտական աստիճան ունեցող գիտաշխատողներին աշխատավարձի հետ վճարվող հավելավճարները Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) միջոցով գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող կազմակերպություններին (այսուհետ՝ Կազմակերպություն) տրամադրելու հետ կապված հարաբերությունները:

2. Ծրագրեր իրականացնող կազմակերպությունները մինչև յուրաքանչյուր բյուջետային տարվա հունվարի 25-ը Կոմիտեի orgs.scs.am առցանց համակարգ մուտք են անում հունվար ամսվա դրությամբ Ծրագրերում ընդգրկված գիտական աստիճան ունեցող գիտաշխատողների տվյալները: Մուտքագրված տվյալների հիման վրա ձևավորված հավելավճարների տրամադրման հայտը (այսուհետ՝ Հայտ) մինչև յուրաքանչյուր բյուջետային տարվա հունվարի 31-ը ներկայացվում է Կոմիտե: Թեմաներ իրականացնող կազմակերպությունները մինչև յուրաքանչյուր բյուջետային տարվա հունվարի 31-ը Կոմիտե են ներկայացնում Հայտը թղթային տարբերակով՝ համաձայն Հավելված N 1-ի:

3. Ծրագրեր իրականացնող կազմակերպությունները orgs.scs.am համակարգում լրացնում են «Գիտաշխատողներին գիտական աստիճանի համար տրվող հավելավճարների տրամադրման հանձնարարության պայմանագիր» (այսուհետ՝ Պայմանագիր) և ձևավորված Պայմանագիրը Հայտի հետ միասին մինչև յուրաքանչյուր բյուջետային տարվա հունվարի 31-ը ներկայացնում են Կոմիտե: Թեմաներ իրականացնող կազմակերպությունները մինչև

յուրաքանչյուր բյուջետային տարվա հունվարի 31-ը ներկայացնում են Պայմանագիրը թղթային տարբերակով՝ համաձայն Հավելված N 2-ի:

4. Պայմանագիրը Կոմիտեի և Կազմակերպության միջև կնքվում է 10-օրյա ժամկետում: Պայմանագիրը կազմվում է երկու օրինակից, ընթացիկ Ծրագրերում և Թեմաներում ընդգրկված գիտական աստիճան ունեցող այն աշխատակիցների թվաքանակի հաշվարկով, ովքեր միայն մեկ Ծրագրից կամ Թեմայից ստանում են օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձից ոչ պակաս չափով վարձատրություն:

5. Տարեկան ֆինանսավորման գործընթացը կազմակերպելու նպատակով Պայմանագրերի գների մասին տեղեկատվությունը Կոմիտեի գիտության քաղաքականության վարչության կողմից զեկուցագրով ներկայացվում է Կոմիտեի գլխավոր քարտուղարին՝ Կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին տրամադրելու համար:

6. Ծրագրեր իրականացնող կազմակերպությունները յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա մինչև 20-ը Կոմիտեի orgs.scs.am առցանց համակարգ մուտք են անում յուրաքանչյուր ամսվա համար Ծրագրերում ընդգրկված գիտական աստիճան ունեցող գիտաշխատողների տվյալները և դրանց հիման վրա ձևավորված եռամսյակային հաշվետվությունը (այսուհետ՝ Հաշվետվություն) յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա մինչև 30-ը ներկայացնում են Կոմիտե: Թեմաներ իրականացնող կազմակերպությունները յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա մինչև 30-ը Կոմիտե են ներկայացնում Հաշվետվությունը՝ թղթային տարբերակով (Հավելված N 1):

7. Տարվա վերջին եռամսյակի առցանց Հաշվետվությունը ներկայացվում է մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 7-ը, իսկ թղթայինը՝ մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 10-ը:

8. Հաշվետու եռամսյակի Հաշվետվությունը չներկայացնելու դեպքում հաշվի է առնվում նախորդ ներկայացված տեղեկատվությունը՝ անկախ չներկայացման պատճառներից:

9. Եռամսյակի ընթացքում փոփոխությունների առկայության դեպքում Կազմակերպությունը Կոմիտե է ներկայացնում փոփոխություն կատարելու անհրաժեշտությունը հիմնավորող փաստաթղթերի պատճենները (ընդունման, ազատման, երկարատև արձակուրդի կամ երկարատև գործուղում ուղարկելու հրամաններ, նոր շնորհված գիտական աստիճանների վկայագրեր և այլն):

10. Հաշվետու եռամսյակից շուտ կատարված, սակայն չներկայացված փոփոխությունները, անկախ չներկայացման պատճառներից, հաշվի չեն առնվում:

11. Հղիության և ծննդաբերության արձակուրդում գտնվող գիտական աստիճան ունեցող գիտաշխատողներին գիտական աստիճանի համար հավելավճարը տրամադրվում է: Մինչև 3 տարեկան երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող գիտաշխատողներին գիտական աստիճանի համար հավելավճարը չի տրամադրվում:

12. Հավելավճար ստացող գիտաշխատողների ցուցակում մինչև տվյալ ամսվա 15-ը ներառյալ կատարված փոփոխությունները հաշվարկվում են տվյալ ամսվա դրությամբ, իսկ 15-ից հետո փոփոխությունների առկայության դեպքում՝ հաջորդող ամսվանից:

13. Մահվան պատճառով փոփոխության դեպքում գիտական աստիճանի համար հավելավճարը տրամադրվում է անկախ տվյալ ամսում աշխատած օրերի քանակից:

14. Տարվա վերջին եռամսյակի առցանց Հաշվետվությունը ներկայացնելուց հետո ձևավորվում է գիտաշխատողներին գիտական աստիճանի համար տրվող հավելավճարների տրամադրման հանձնարարության պայմանագրի գնի կամ այլ պայմանների փոփոխության մասին համաձայնագիր (այսուհետ՝ Համաձայնագիր), որը Ծրագրեր իրականացնող կազմակերպությունները ներկայացնում են Կոմիտե Հաշվետվության հետ միասին: Թեմաներ իրականացնող կազմակերպությունները Համաձայնագիրը Հաշվետվության հետ միասին ներկայացնում են Կոմիտե թղթային տարբերակով՝ համաձայն Հավելված N 3-ի:

15. Կոմիտեի գիտության քաղաքականության վարչության գիտության բնագավառի տվյալների հավաքագրման և վերլուծության բաժինը՝

1) հավաքագրում է Կազմակերպությունների կողմից տարեսկզբին Հայտով ներկայացված և եռամսյակային պարբերականությամբ Հաշվետվություններով ներկայացվող տվյալները,

2) հավաքագրված տվյալները ներառում է ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող ընթացիկ ծրագրերում և թեմաներում ընդգրկված գիտական աստիճան ունեցող գիտաշխատողների վերաբերյալ ստեղծված շտեմարանում (այսուհետ՝ Շտեմարան),

3) իրականացնում է ներկայացված տվյալների համեմատության՝ համապատասխան փոփոխությունների ներառման և ամփոփման նպատակով,

4) Շտեմարանում համապատասխան փոփոխությունները կատարում է տեղեկատվությունը ստանալու օրվանից 5-օրյա ժամկետում:

16. Կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնի կողմից գիտական աստիճանի համար հավելավճարների գումարների փոխանցումն

իրականացնելու նպատակով Կոմիտեի գիտության քաղաքականության վարչության կողմից Կոմիտեի գլխավոր քարտուղարին զեկուցագրով ներկայացվում է հավելավճար ստացող գիտաշխատողների ճշգրտված թվաքանակի, ինչպես նաև ըստ Կազմակերպությունների վճարվելիք հավելավճարների վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն Հավելված N 4-ի:

17. Զեկուցագրով հավելավճար ստացող գիտաշխատողների թվաքանակը ներկայացնելու համար հիմք են հանդիսանում՝ Ծրագրեր իրականացնող կազմակերպությունների կողմից Կոմիտեի orgs.scs.am առցանց համակարգում մուտքագրված տվյալները, իսկ Թեմաներ իրականացնող կազմակերպությունների համար՝ թղթային տարբերակով ներկայացված տվյալները:

18. Կազմակերպությունների կողմից սույն կարգով սահմանված ժամկետներում Հայտերի կամ այլ պահանջվող տեղեկատվության չներկայացման դեպքում գիտական աստիճանի համար հավելավճարների տրամադրումը դադարեցվում է մինչև սույն կարգով սահմանված հայտերի կամ այլ պահանջվող տեղեկատվության ներկայացնելը:

Հավելված 1
ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի նախագահի
2023 թվականի հունվարի 23-ի N 02-Ա/Ք հրամանի
հավելվածի

ՀԱՅՏ/ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ պետական բյուջեից _____ -ում
(կազմակերպության անվանումը)

իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում/ թեմաներում _____ թվականի _____ամսվա* դրությամբ ընդգրկված գիտական աստիճան ունեցող գիտաշխատողների հավելավճարների տրամադրման

Գիտության դոկտորների ընդհանուր թվաքանակը՝ _____

Գիտության թեկնածուների ընդհանուր թվաքանակը՝ _____

Հ/հ	Ծրագրի կամ թեմայի ծածկագիր	Ազգանուն	Անուն	Հայրանուն	Գիտական աստիճան**	Վկայագրի սերիա	Վկայագրի համար	Վկայագրի շնորհման տարեթիվ	Սոցիալական քարտի համար	Անհատական կոդ	Աշխատավարձ	Կատարված փոփոխություն և ամիս, ամսաթիվ***
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
1												
2												

* Բյուջետային տարվա սկզբին ներկայացվող հայտում նշվում է հունվար, իսկ եռամսյակային հաշվետվությունում տվյալ եռամսյակի յուրաքանչյուր ամիսը

** Կրճատ նշվում է գիտական աստիճանը , օրինակ՝ տնտգդ, տնտգթ, տեխգդ, տեխգթ, բժշգդ, բժշգթ, ֆմգդ, ֆմգթ և այլն:

*** Լրացվում է եռամսյակային հաշվետվությունում կատարված փոփոխությունը և ամսաթիվը:

Հավելված N 2
ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի նախագահի
2023 թվականի հունվարի 23-ի N 02-Ա/Ք հրամանի հավելվածի

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N _____

ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՄԱՐ ՏՐՎՈՂ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

ք. Երևան « ____ » _____ 20 _____ թ.

ՀՀ գիտության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), ի դեմս գլխավոր քարտուղար Լևոն Ֆարմանյանի (այսուհետ՝ Հանձնարարող), որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և _____ -ը,
(կազմակերպության անվանումը)
(այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն/ռեկտոր _____ -ի (այսուհետ՝ Հանձնակատար), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության _____ թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 10-ի թիվ 2-Ն որոշմամբ, ինչպես նաև հիմք ընդունելով Կոմիտեի նախագահի 2023 թվականի հունվարի ____-ի N ____-Ա/Ք հրամանով հաստատված ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում ընդգրկված գիտական աստիճան ունեցող գիտաշխատողներին վճարվող հավելավճարները կազմակերպություններին տրամադրելու կարգի 3-րդ և 4-րդ կետերը՝ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով Հանձնարարողը Հանձնակատարի կողմից ներկայացվող հայտերի հիման վրա նրան է տրամադրում ՀՀ պետական բյուջեի հաշվին գիտական և գիտատեխնիկական գործունեության շրջանակներում իրականացվող ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման, ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման, նպատակային-ծրագրային ծրագրերում և (կամ) պայմանագրային (թեմատիկ) թեմաներում ընդգրկված գիտաշխատողների գիտական աստիճանի համար տրվող հավելավճարները՝ հավելավճար ստացող գիտաշխատողներին վճարելու նպատակով:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1 Սույն պայմանագրի գինն է (տրամադրվող դրամական միջոցների չափը)՝
_____ (_____)
(թվերով) (բառերով)
ՀՀ դրամ, թվով _____ գիտության թեկնածուների ու _____ գիտության դոկտորներին հավելավճար վճարելու նպատակով:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

3.1. Հանձնարարողը սույն պայմանագրի 2.1 ենթակետում նշված ֆինանսական միջոցները Հանձնակատարին է տրամադրում ամսական կտրվածքով, ՀՀ օրենսդրության սահմանված կարգով:

4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Կողմերն ունեն ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում ընդգրկված գիտական աստիճան ունեցող գիտաշխատողներին վճարվող հավելավճարները կազմակերպություններին տրամադրելու կարգով նախատեսված իրավունքներ և պարտականություններ:

4.2. Հանձնարարողն իրավունք ունի.

4.2.1. ցանկացած ժամանակ ստուգել Հանձնակատարի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտականությունների իրականացման ընթացքը,

4.2.2 դադարեցնել գիտական աստիճանի համար հավելավճարների տրամադրումը՝ Կազմակերպությունների կողմից կարգով սահմանված ժամկետներում հայտերի կամ այլ պահանջվող տեղեկատվության չներկայացման դեպքում:

4.3. Հանձնարարողը պարտավոր է.

4.3.1. սույն պայմանագրի 3.1 ենթակետով սահմանված ժամկետներում Հանձնակատարին տրամադրել նախատեսված ֆինանսական միջոցները:

4.5. Հանձնակատարը պարտավոր է.

4.5.1. սույն պայմանագրով ստանձնած պարտականությունները կատարել անձամբ և սահմանված ժամկետներում,

4.5.2 Հանձնարարողի պահանջով նրան տրամադրել սույն պայմանագրի կատարման ընթացքի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն:

5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Սույն պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

6.2. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումները իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՂ	ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐ
ՀՀ գիտության կոմիտե ք. Երևան, Օրբելի եղբայրների փ. 22 Հ/Հ 900011033017 ՀՎՀՀ 02704199 ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան Կոմիտեի գլխավոր քարտուղար՝ Լևոն Ֆարմանյան	

Հավելված N 3
ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի նախագահի
2023 թվականի հունվարի 23-ի N 02-Ա/Ք հրամանի հավելվածի

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N _____

ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՄԱՐ ՏՐՎՈՂ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ԿԱՄ ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

ք. Երևան « ____ » _____ 20_____ թ.

ՀՀ գիտության կոմիտեն, այսուհետ՝ Հանձնարարող, ի դեմս ՀՀ գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լևոն Ֆարմանյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և

_____

(կազմակերպության անվանում)

այսուհետ՝ Հանձնակատար, ի դեմս _____,

(պաշտոն, անուն, ազգանուն)

որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետ՝ Կողմեր, հիմք ընդունելով 20_____ թվականի _____ _____ -ին կնքված պայմանագրի 6-րդ կետի 6.2 ենթակետը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կողմերի համաձայնությամբ նրանց միջև 20_____ թվականի _____-ին կնքված թիվ _____ պայմանագրի 2-րդ կետում կատարել փոփոխություն՝ որպես պայմանագրի գին նշելով _____ (_____) ՀՀ դրամ:

(թվերով) (տառերով)

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը կազմված է մեկ էջից, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՂ	**ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐ**
ՀՀ գիտության կոմիտե	
ք. Երևան, Օրբելի եղբայրների փ. 22	
Հ/Հ 900011033017	
ՀՎՀՀ 02704199	
ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան	
Կոմիտեի գլխավոր քարտուղար՝	
Լ. Ֆարմանյան	

Հավելված 4
ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի նախագահի
2023 թվականի հունվարի 23-ի N 02-Ա/Ք հրամանի հավելվածի

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում ընդգրկված գիտական աստիճան ունեցող գիտաշխատողների թվաքանակը և ամսական կտրվածքով վճարվելիք հավելավճարների գումարները ըստ կազմակերպությունների

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Պայմանագրի համարը, կնքման ամիս, ամսաթիվը	Կազմակերպության բանկը, հաշվարկային հաշվի համարը	Նախորդ ներկայացվածի դրությամբ					Ներկայի փոփոխված դրությամբ				
				Ամիս					Ամիս				
				հավելավճար ստացողների թվաքանակ		ամսվա կտրվածքով վճարվելիք հավելավճարի գումարը			հավելավճար ստացողների թվաքանակ		ամսվա կտրվածքով վճարվելիք հավելավճարի գումարը		
				դոկտոր	թեկնածու	դոկտոր	թեկնածու	ընդամենը	դոկտոր	թեկնածու	դոկտոր	թեկնածու	ընդամենը
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*	*10*	*11*	*12*	*13*	*14*
1													
2													
3													
…													
Ընդամենը													